ՀՏԴ 32

Քաղաքագիտություն

Մարիամ ՄԱՐԳԱՐՅԱՆ
քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գարիկ ՊՈՂՈՍՅԱՆ
Քաղաքագիտության մագիստրոս
Գլոբալ Բրիջ կրթահամալիրի անգլերենի դասախոս
e-mail: garik.poghosyan2011@gmail.com

ԱՐԴԻ ՏՈՒՐԲՈՒԼԵՆՏՈՒԹՅԱՆ «ԲԻՈՔԱՂԱՔԱԿԱՆ» ԵՎ «ԲԻՈԿՐԹԱԿԱՆ» ՉԱՓՈՒՄՆԵՐԸ ՀՀ ԿԵՆՍՈՒՆԱԿ ԱՊԱԳԱՅԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐՈՒՄ

Քաղաքական գործընթացների բովանդակային քննարկման ընդարձակման նպատակով սույն հոդվածն առաջ է քաշում կենսունակ ապագայաբանության բազմավեկտոր վերծանման հարցը արդի տուրբուլենտության պայմաններում: Այս համատեքստում համակողմանի վերլուծության են ենթարկվել բիոկրթական ու բիոքաղաքական չափումները որպես մրցունակ ապագայի բաղադրիչներ՝ վերարժևորելով դրանց տեղն ու դերը արդի մարտահրավերներին անթրոպոլոգիական ուսումնասիրությունների հիման վրա ինստիտուցիոնալ արձագանքի մեխանիզմներ ձևավորելու հարցում:

Բանալի բառեր՝ բիոքաղաքական, բիոկրթական, կեսունակություն, արդի տուրբուլենտություն, ապա-գայաբանություն, մեխանիկական արդիականացում:

Г.Погосян

В статье поднимается вопрос многомерного декодирования жизнеспособной футурологии в условиях современной турбулентности С целью расширения

значимого обсуждения политических процессов,. В этом контексте, био-образовательные и биополитические измерения были тщательно проанализированы как компоненты конкурентного будущего, повторное их место и роль в формировании механизмов институционального ответа на современные вызовы, основанные на антропологических исследованиях.

Ключевые слова: *биополитика, биообразование, жизнеспособность, текущая турбулентность, футурология, механическая модернизация*

G.Poghosyan

In order to expand the meaningful discussion of political processes, this article raises the question of a multi-dimensional decoding of a viable futurology in the context of current turbulence. In this context, bio-educational and biopolitical dimensions have been comprehensively analyzed as components of a competitive future, reassessing their place and role in the formation of institutional response mechanisms to modern challenges based on anthropological research.

Key words: *Biopolitical, bioeducational, viability, current turbulence, futurology, mechanical modernization*

1.1. «Բիոկրթական» եզրի ներմուծումը արդի տուրբուլենտության քննարկումներում

Քաղաքական ապագայաբանության մեր ուսումնասիրության հիմնասյունը Հայաստանի Հանրապետության կենսունակության բացահայտման, վերծանման և կոդավորման գաղափարն է: Գիտահետազոտական հարացույցի միջոցով վերջինս գործառնելու նպատակով գործ ունենք քաղաքագիտական ու հասարակագիտական բազմաճյուղ վերլուծության հետ, որտեղ խաչվում են *տուրբուլենտություն, ռազմավարական պլանավորում, գունավոր հեղափոխություններ, բիոքաղաքականություն* եզրերը: Հիմնահարցի կշիռն ու բարդությունը հաշվի առնելով՝ կարևոր ենք համարել քաղաքագիտական ներկապնակի հարստացումը համադրական վերլուծության միջոցով, երբ քաղաքական վարքաբանության ու կենսունակության վերջնարդյունքի կառավարմանն ուղղված մեկնաբանությունները մեկտեղվում են՝ մեկ հարցի համակողմանի անդրադարձ կատարելու համար: Արդի տուրբուլենտությունը դիտարկելով

որպես սույն աշխատանքի համատեքստ՝փորձ ենք անում վեր հանել քաղաքագիտական, սոցիոմշակութային, անթրոպոլոգիական և սրանց հարող գիտաճյուղերի տեսակետից համարժեք ընկալելի բանաձևեր ինչպես կենսունակության, այնպես էլ ապագայի ռազմավարական մշակման դաշտում:Ասվածը հիմնավորվում է այն հանգամանքով, որ «Հայաստանում քաղաքական արդիականացումը քաղաքականության դերակատարների, ավանդական և արդի արժեքներ կրողների ու արարողների և իշխանության ինստիտուտների միջև քաղաքական փոխազդեցությունների բազմաչափ ու բարդ խճանկար է: Դա է պատճառը, որ ՀՀ-ում քաղաքական զարգացման (բաշխում, շարժունակություն, մասնակցություն, լեգիտիմություն **(օրինականություն)**, ինքնություն) ճգնաժամների հաղթահարումը ձգձգվում է…»[1]: Ճգնաժամերի հաղթահարման ձգձգումը, մեր համոզմամբ, ունի քաղաքական և անթրոպոլոգիական բաղկացուցիչներ, քանի որ մի կողմից հայ մարդու ազգային «ես»-ի արդիականացման, մյուս կողմից՝գլոկալ փոփոխություններին ազգային անվտանգության տիրույթում հաշվետու ու գիտակցված ձևով արձագանքելու անկարողության տեսական քննարկումների ծիրում է: Սոցիալ-մշակութային ու քաղաքական տեղաշարժերը դիտարկելով որպես մեկ ամբողջություն, վերծանելով արդի անորոշությունների քաղաքական չափման ռիսկայնության աճի հավանականությունը, արժևորելով վիրտուալ տարածության դերային անորոշություններ գեներացնելու ներուժը՝ ՀՀ առաջ ծառացած ու նրա պետութենական կենսունակությունը խարխլող գործոնները փորձել ենք վերանայել համակողմանիորեն՝գտնելու համապիտանի ինստիտուցիոնալ մեխանիզմներ՝ մարտահրավերներին արագ և հիմնովին արձագանքելու, ինչու՞ ոչ՝մարտահրավեր նետելով ազգային կենսունակությունը բարձրացնելու հեռահար նպատակով: Ասվածի գիտական պահանջարկվածությունը հիմնավորված ենք համարում այն փաստարկով, որ «ՀՀ-ում զուգահեռ ընթացող մեխանիկական «արևմտականացման» և «վազող արդիականացման» խորքային խզումների (բախումների) հետևանքով քաղաքական զարգացման նեոլիբերալ դերակատարները մերժեցին ազգային, քաղաքական և քաղաքացիական ինքնության բնականոն արդիականացման միջոցով տուրբուլենտության մարտահրավերներին պատասխանելու հնարավորությունը»[2]: Հիմք ընդունելով այն իրողությունը, որ ինքնության ու դրա բնականոն արդիականացման ազգային քաղաքական ու

---

[1] ***Մարգարյան Մ.,*** *Քաղաքական տուրբուլենտություն. մարտահրավերներ և Հայաստանի բնականոն արդիականացման հնարավորությունները, 26.01.2021* https://mmmargaryan.wordpress.com

[2] *Նույն տեղը*

քաղաքացիական չափումների ուսումնասիրությունը պահանջում է ենթախորք և համակողմանիություն՝ ուրվագծվում են սույն աշխատանքի գիտական բիֆուրկացիայի հնարավորությունները, երբ մեկ գիտաճյուղի վարկածը, դիցուք՝ազգային ու պետական կենսունակության մասով, փորձ է արվում դասակարգել ու հիմնավորել մեկ այլ գիտաճյուղի ծիրում արված հետազոտությունների արդյունքներով: Այս նկատառումով էլ մրցունակ, կենսունակ, հարատև կերպափոխվող հասարակարգ կառուցելու ձգտումով կարևորել ենք ինչպես քաղաքագիտական, անթրոպոլոգիական, տեսական բնույթ կրող կամ վերլուծական մոտեցումները, այնպես էլ կրթական քաղաքականության և «քովիդի»[1] պայմաններում ուսանողների շարժունակության խնդիրները: Կրթական քաղաքականության, կրթական հաստատությունների շարժունակության սահմանափակումների, կրթական վերազգային ինտեգրման փորձի ուսումնասիրության ընտրության հիմքում դիտարկել ենք իրերի հետևյալ դասավորությունը: Առաջին, գլոկալ հիմնախնդիրների արծարծումը հնարավոր չէ պատկերացնել առանց թիրախային ոլորտների ուսումնասիրության՝ռազմական ու մարդկային անվտանգություն, միջազգային տնտեսական հարաբերություններ և առևտուր, կրթական քաղաքականություն և տեխնոլոգիաներ, մարդկանց միջազգային և ներազգային շարժունակություն, Սփյուռքի, միջմշակութային հարաբերությունների հարցեր և այլն: Աշխարհաքաղաքական ճամփաբաժանի տեսակետից ներկայացված լինելով եվրոպական ու եվրասիական վերազգային ինտեգրման գործընթացների էպիկենտրոնում՝ՀՀ-ն ունակ է եղել քաղաքական, տնտեսական երկխոսությունից ու չափանիշների մոտարկումից զատ համադրել իր կրթական ավանդույթները եվրոպական բարձրագույն կրթության ոլորտի հետ: Նորարարության, տեխնոլոգիաների, բարեփոխումների, միջազգային ուսանողական շարժունակության հարցերը Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտը շաղկապել են նրա արտաքին քաղաքական ուղենիշների հետ: Եթե անվտանգության, տնտեսության, շրջակա միջավայրի, միգրացիայի և այլ ոլորտներում թիրախավորված ուսումնասիրությունները դժվար է ընկալել որպես քաղաքական մեծ կշիռ ունեցող, սակայն միևնույն ժամանակ աշխարհաքաղաքական վերադասավորումներից մասամբ մեկուսի գործընթացներ, ապա կրթական քաղաքականության և բարձրագույն կրթության ոլորտում ինտեգրման տիրույթում «քեյս սթադին» կարող էր մի կողմից վեր հանել հայկական փորձում առկա թերացումները (դրանով իսկ հնարավորություն ընձեռելով վերաարժևորելու ՀՀ կենսունակության այս չափումը), մյուս կողմից՝մատնացույց անել մի

[1] Covid-19 Disease https://www.britannica.com/science/COVID-19

ճանապարհային քարտեզ, որը կենսունակ պետության ապագայաբանությունը դիտարկում է նեղ հասարակագիտական տեսությունների ծիրից դուրս, առավել ճկուն վերլուծական կառուցակարգերի համակարգում: Վստահ ենք, որ «քովիդի» սահմանափակումների պայմաններում կրթական հաստատությունների առաջ ծառացած խնդիրները ոչ միայն կրթական, այլև սոցիոմշակութային բնույթ են կրում: Ուստի, հանդիսանալով բազմալորոտ համադրական ուսումնասիրությունների անհրաժեշտության գիտակցումով շահադրդված կողմ՝հանձն ենք առել լրացնելու գիտահետազոտական աշխարհում առկա բացը: Համոզմունք ունենալով առ այն, որ «քովիդի» հարկադիր սահմանա-փակումները երիտասարդների շարժունակության, սոցիալականացման, ինքնաիրացման ու ինքնադրսևորման իմաստով նորագույն մարտահրավեր են, փորձ ենք արել ներառականության սկզբունքով ավագ դպրոցի ուսանողական շարժունակության հիմնախնդիրը ապակոդավորել՝ սոցիոմշակութային մարդաբանության պրիզմայով դիտարկելով: Այլ կերպ ասած, երկու «քեյս սթադիի» հանրագումարում, որքանով ցույց են տվել մեր հետազոտությունները, առաջին անգամ համադրել ենք կրթական քաղաքականության, մարդկանց շարժունակության սոցիոմշակութային, ինստիտուցիոնալ, կառուցվածքագործառութային խնդիրները արդի տուրբուլենտության հաղթահարման ու կենսունակ ապագայաբանության քաղաքագիտական ուսումնասիրության հետ: Ասվածից հետևում է, որ ազգային ու պետական ինստիտուցիոնալացված կենսունակության որակական բարելավման տեսակետից ուշագրավ է բիոքաղաքական սոցիովարքաբանության բովանդակության ընդլայնումը դիտարկել բազմաոլորտ վերլուծությունների արդյունքների համակցման ծիրում, ինչի, թերևս, առաջին փորձը սույն աշխատանքն է:

Այսպես, «քովիդի»՝14-18 տարեկան հայ պատանիների ու աղջիկների շարժունակության վերաբերյալ բաց հարցերի տեսքով երեսուն պատանիների ու աղջիկների շրջանում կատարված մեր հետազոտության արդյունքում կարող ենք վստահորեն արձանագրել հետևյալ եզրահանգումների հիմնավորվածությունը՝

ü «Քովիդի» սահմանափակումները մասնակի կամ լրիվ բացասական ազդեցություն են ունեցել ինչպես կրթական, ինտելեկտուալ կյանքի, սպորտային կյանքի առումով, այնպես էլ կրթության որակի ապահովման իմաստով ընդհանրապես՝արդյունավետություն, ուսումնական ծրագրի

կատարմանն առնչվող խնդիրներ, առաջադիմություն, կայուն հոգեբանական վիճակ և այլ:[1]

- Հուզական կյանքի և հոգեբանական առողջության ռիսկերի մեծացում:
- Մարդկային շարժունակության երկարաժամկետ հետևանքների գիտակցում՝ հարաբերությունների, տարիքային խմբում հորիզոնական կապերի, ընկերության, հաղորդակցության և վերջիններից որակի ու հաճակիության իմաստով:
- Շարժունակության ու կրթական սահմանափակումների քաղաքականության արդյունավետության շուրջ դիրքորոշումների անորոշություն կամ հակադրում, ինչը սոցիալ-մշակութային իրողությունների առկա խզումների խորացման կամ խնդիրների բարդացման պատճառ կարող է հանդիսանալ:
- Առցանց կրթական ծրագրերի որակի նկատմամբ վերապահում, քաղաքացիական սեկտորից ակնկալիքների չձևավորված կամ անորոշ վիճակ:
- Ծագմամբ, ընտանեկան կամ սոցիալական դրությամբ, առողջական վիճակով ու նմանատիպ հանգամանքներով պայմանավորված առավել խոցելի խմբերի կրած դժվարությունների բացահայտման հարաբերական բարդություն:

«Բիոկրթական» ուսումնասիրությունների երկրորդ մասը հայկական բարձրագույն կրթության ինտեգրման փորձի ուսումնասիրությունն է Եվրոպական բարձրագույն կրթական տարածությանը: Եթե նախորդ ուսումնասիրության թիրախում դպրոցահասակ պատանիների շարժունակության սահմանափակման ծնած սոցիոմշակութային, հոգեբանական, ինստիտուցիոնալ, քաղաքական խնդիրներն էին, ապա այս հետազոտության կիրառական նշանակությունը երկակի է՝կրթական, քաղաքական և միջազգային: Որպես կրթական վերազգային տարածությանը ինտեգրման փորձի օրինակ հայկական բարձրագույն կրթության ոլորտի փորձագետների խմբի շրջանում արված հետազոտություն եզրահանգումները կապված են «ԲՐԻՔՍ» երկրների՝կրթական տարածության միասնականացման քաղաքականության սաղմնային վիճակի հետ, ուստի վերջիններից համար կրում են մոդելային բնույթ: Այսպես՝

- Փորձագիտական համայնքը՝ դասախոսներ, կրթական քաղաքականության մշակման և իրագործման մեջ ներգրավված անձինք,

---

[1] ***Poghosyan G.***, *The Self-perceived Impact of COVID-19 Human Mobility Restrictions on Armenian Students Aged 14-18, Journal of Education in Black Sea Region Vol. 6, Issue 2, 2021,* ***DOI:*** *https://doi.org/10.31578/jebs.v6i2.234, p. 89*

գիտահետազոտողներ, ընդհանուր առմամբ համոզված են, որ բարձրագույն կրթության համակարգերի ինտեգրումը բազմաշերտ երևույթ է, այն ներառում է անձնական ու մասնագիտական աճ, տեխնոլոգիական զարգացում, մշակութային հարցերի իրազեկում, քաղաքական նկատառումներ և այլն[1]:

ü Ինտեգրման առավելություններից են շարժունակությունը, կարիերայի աճը, տնտեսական զարգացումը, մշակութային բազմազանությունը, գործընկերներից սովորելու հնարավորությունը, երկկողմ քաղաքական հարաբերությունների զարգացմանը նպաստելը, քաղաքական, տնտեսական, սոցիոմշակութային ոլորտներում իրականացվող փոփոխությունները, անհատական, ազգային, վերազգային ոլորտներում գործառնումը, միջազգային կրթական պրակտիկայի տեղայնացումը և այլն:

ü Ինտեգրվող և ինտեգրող երկրների համար առկա է փոխշահավետության սկզբունքը: Մի կողմից՝ փոքր երկրները հնարավորություն են ստանում օգտվելու տեխնոլոգիաներից, հետազոտական նորարարություններից ու «թրենդներից», մյուս կողմից՝ ինտեգրող (ընդունող) հասարակություններն օգտվում են ինտելեկտուալ ներհոսքից, մշակութային ու կրթական հնարավորությունների ընդլայնումից և այլն:

ü Առկա է թափանցիկությամբ պայմանավորված ինստիտուցիոնալ արդյունավետության խնդիր, երբ հակադրվում են *անհատ-հասարակություն* շահերը, ինչի հետևանքով կրթական տարածության ինտեգրման գործընթացը կրում է հատվածային բնույթ՝ներգրավելով միայն անհատների որոշակի խմբերի:

Հանրագումարենք.քաղաքական երևույթների ու օրինաչափությունների տեսական ու կիրառական քննարկումների բազմաչափությունը բազմաոլորտ ուսումնասիրությունների արդյունքների համադրությամբ նորովի մեկնաբանելու անհրաժեշտություն է առաջացել: Միակողմանի, տեսական, կիրառական, ձևով միջգիտակարգային, բովանդակությամբ՝ նեղ ուսումնասիրությունները չեն արտահայտում քաղաքական դինամիկ զարգացումների գիտական տրամախոսությունը: Բազմաոլորտ ուսումնասիրությունների ներդաշնակումը կարող է ստեղծել նոր հնարավորություններ *անհատ-հասարակություն-պետություն-գլոկալ քաղաքակրթություններ* քառամակարդակ, *անցյալ-ներկա-ապագա* եռաչափ

[1] ***Poghosyan G****. At the intersection of the European Higher Education Area and BRICS: The Way Forward, «Լրաբեր», Հայ-ռուսական համալսարանի սերիա՝հումանիտար և հասարակական գիտություններ, (35), ՀՌՀ հրատարակչություն, № 2/2020, p.153*

հարթություններում ազգային ու պետական կենսունակության շերտերի փոխդասավորության օրինաչափությունների վերծանման, առաջնահերթությունների վերաձևակերպման համար: Հայ մարդը, լինելով աշխարհակարգի, քաղաքակրթությունների բախման ու երկխոսության, արտածին ու ներծին բազմապիսի մարտահրավերների օբյեկտ, հնարավորություն է ստանում մարտահրավեր նետելու իր դրությունը ապակայունացնող, խաթարող, վտանգող, այլ կերպ ասած՝ տուրբուլենտություն ծնող, զարգացնող, ուղղորդող ներքին ու արտաքին դերակատարների արժեշահային խմբերին, գործոնների համալիրին: Դառնալով կենսունակ, ինքնանորացող ու ինքանորոգվող, պերմանենտ կերպով զարգացող, աճի ու ռեսուրսների բազայի ընդլայնմանը միտված, սեփական ներուժն ու կենսունակությունը շարունակաբար բացահայտող, համալրող, զորացնող տեսակ՝ հայ մարդն իր քաղաքական խնդիրների համակարգը փոխլրացնում, ներդաշնակում, բարելավում, կանոնակարգում ու կառավարում է տարբեր գիտաճյուղերից ստացվող գիտական տեղեկույթով: Փոքրի, զոհի թերարժեքության բարդույթի հաղթահարման, կենսունակ ապագայի տեսլականի կառուցման իմաստով կարևորում ենք արդի տուրբուլենտության պայմաններում տարատեսակ ոլորտների՝տնտեսություն, անվտանգություն, կրթություն, իրավունք, մշակույթ, փոխլրացնող հետազոտությունների արդյունքների քաղաքագիտական վերլուծությունը: Այսօրինակ հանգամանքներում «բիոկրթական», այսինքն՝ մարդու կենսագործունեության կրթական փոխազդեցությունների ուսումնասիրությունը կլիներ թերի առանց «բիոքաղաքականության» ու կենսունակության հարցերի հիմնարար դիսկուրսի ծավալման:

1.2 Քաղաքական գործընթացների «բիո» չափումը՝ որպես ռազմավարական հեռանկարների կանխատեսման փոխլրացնող միջոց

Ակնհայտ է, որ տուրբուլենտություն ու քաղաքական հեռանկարներ եզրերը գոյություն ունեցող քաղաքագիտական չափումները միայն մասնակիորեն են ներկայացնում քաղաքական դինամիզմի տրամաբանությունը: Այս իմաստով կարևորում ենք մեր վերլուծություններում «բիո» չափման ներմուծումը, այսինքն՝ մարդը որպես կենսաբանական էակ իր կենսունակության հեռանկարներն ապահովում է կենսաբանության ու վարքաբանության առնչակցությունների խաչմերուկում՝ բազմապատկելով իր մշակութային, քաղաքական, սոցիալ-հոգեբանական ինքնության ենթաշերտերը: Եթե քաղաքագիտական տիրույթում ավանդաբար «բիո» տիրույթը ոչ թե պարտադիր, այլ փոխլրացնող է համարվել, ապա համաշխարհային գործընթացների

տարերային ազդեցությունը մարդու ինքնության բազմավեկտոր փոխակերպումների վրա հարկադրում է վերաարժևորելու «բիո» ասպեկտի կշիռը քաղաքական քննարկումներում: Մի կողմից՝ մարդը որպես սոցիալական էակ ունի իրեն բնորոշող սոցիոմշակութային քաղաքական վարքագիծ, մյուս կողմից տեսանելի է, որ վարքաբանության ու կենսաբանության կապը դուրս է սոցիոմշակութային բանաձևերի գործառնության ծիրից, ոչ թե կրում է վերջիններիս ազդեցությունը, այլ ակնհայտ (ագրեսիա, բռնություն, ռեակցիա, զանազան ռեֆլեքսներ) կամ թաքնահարույց (պասիվ ագրեսիա, հակամարտության պատճառներ, հաշտվողականության պատրաստակամության բացակայություն, մանիպուլյացիաներ, քաղաքական երկխոսության մերժում) կա՛մ անմիջականորեն ձևավորում է դրանք, կա՛մ փոխակերպում, կա՛մ քայքայում: Ուստի մարդու՝ որպես քաղաքական, տնտեսական, սոցիալական, կենսաբանական էակի համալիր դիտարկումը քաղաքագիտական քննարկումներում հույժ կարևոր է հիմնախնդիրների համալիր լուծումներ գտնելու նպատակով:

Ընդունված մոտեցում է, որ բիոքաղաքականության հիմնադիրն է Միշել Ֆուկոն[1], սակայն կարծում ենք՝ կարևոր է հիշատակել, որ ֆուկոյական բիոքաղաքականությունը որքան էլ կարևոր, մասամբ է ներկայացնում բիոքաղաքականության այն բազմաճյուղ զարգացումը, որը 20-րդ դարի երկրորդ կեսին հասարակագետներին ստիպեց վերանայել քաղաքական վարքաբանության ու գործընթացների մեջ «բիո» չափման դերի մասին ունեցած նախկին քարացած, մերժողական կամ ոչ լիարժեք ընկալումները: Այսպես՝ վարքի կառավարման իր մոդելը ներկայացնելով՝ Մ. Ֆուկոն պարզաբանում է, որ «հպատակների վարքը կարգավորելու» կառավարության նպատակներն անսահմանափակ են, դրանց նպատակն այլ պետությունների հետ մրցակցությունն է, տնտեսական գործունեությունը, արտադրությունը, գնային քաղաքականությունը վերահսկելը հանուն «այլ պետությունների հետ մրցունակ հավասարակշռության»[2]: Այս նկատառումներից ելնելով է, որ Մ. Ֆուկոն կենսաքաղաքականության հիմքում տեսնում է բնակչությունը[3]՝ դրա տնտեսական հնարավորությունների ներուժով հանդերձ: Մեր ուսումնասիրության սևեռումը, սակայն, անհատի կենսաբանական շահադրդմամբ պայմանավորված քաղաքական վարքաբանությունն է՝

---

[1] ***Foucault M.***, *The Birth of Biopolitics, Lectures at the College de France, 1978-79, edt. Senellart M., Palgrave Macmillan, 2008*

[2] *Տե՛ս Ibid, p.7*

[3] *Ibid, p.21*

կենսաբանական ազդակների դերաբաշխումը *անհատ-հասարակություն-պետություն* քաղաքական միկրո և մակրո մակարդակներում: Այս համատեքստում ուրվագծվում են վարքաբանության կենսաբանական գործոնների և ռազմավարական հեռանկարների կապերը. եթե մարդը քաղաքական միջավայրում ինքնադրսևորվում ու ինքնաիրացվում է ինչպես սոցիոմշակութային, այնպես էլ կենսաբանական գործիքների դրդմամբ կամ միջոցով, ապա մարդու՝ որպես կենսաբանական էակի գործառնման բովանդակությունը կարելի է դիտարկել իր առաձգականության տիրույթում՝ընդգծելով հիմնախնդիրների լուծման հնարավոր տարբերակների քանակական ու որակական հատկանիշները: Այս նկատառումներից ելնելով, ինչպես նաև համամոլորակային կենսաքաղաքական գործընթացներով պայմանավորված՝մարդկային շարժունակության կրթական չափման ուսումնասիրմամբ փորձ կատարեցինք լրացնել մեր տեսադաշտում առկա ուսումնասիրությունների բացը: Կենսաքաղաքական այս կամ այն ասպեկտի, դիցուք՝շարժունակության կամ բիոկրթական հիմնախնդիրների ընդհանրական պատկերացում ունենալու մտադրությամբ, հակիրճ անդրադարձ կատարենք կենսաքաղաքականության բնութագրական գծերին: Բազմաբնույթ են մարդու՝բնության թելադրանքով դրսևորած վարքագծի օրինակները: Այսպես, հետազոտողները պարզել են, որ «անգամ նախադպրոցական տարիքում, երբ մեծահասակներ ներկա չեն, իշխող երեխաները հեշտությամբ ստանձնում են իշխող դեր խմբի նկատմամբ կանոնները մեկնաբանելու ու դրանք պարտադրելու նպատակով»[1]: Նմանատիպ օրինակների հիման վրա Ռոջեր Դ. Մասթերզը հանգում է այն եզրակացությանը, որ քաղաքականությունը կարելի է սահմանել «որպես այն վարքը, որը միաժամանակ գործի է դնում հարաբերություններ հաստատելու, տիրապետելու և ենթարկեցնելու ատրիբուտները, որ մարդ պրիմատը կիսում է շատ այլ կաթնասունների հետ, ինչպես նաև լեզալ ու սոցիալական կյանքի սովորութային կարգավորման ատրիբուտները, որոնք բնորոշ են լեզվով օժտված մարդկային խմբերին»[2]: Փաստորեն քաղաքականությունը ոչ միայն բնորոշվում է սոսկ որպես վարքի դրսևորման ձև, այլև սահմանվում է սոցիոմշակութային ու կենսաբանական ազդեցությունների միջակայքում որպես դրանք իրար հետ համադրող, հաշտեցնող ու համակարգող մի օրինաչափություն, որն ունի ինչպես զարգացման տրամաբանություն ու նախասկիզբ, այլև կանխատեսելի վերջնարդյունք ու բնական-մշակութային գործիքակազմ: Ուստի

---

[1] ***Blank R. H. and Hines S. M., Jr***, *Biology and Political Science, Routledge, 2001, p.96*

[2] *Ibid, p. 26*

պատահական չէ հետազոտողների այն կարծիքը, որ «մարդկանց սոցիալականացնում են այնպես, որ նրանք ներքնայնացնեն նախազգուշական մշակութային մոտեցումները (attitudes), որոնք ազդում են այն բանի վրա, թե ինչպես են նրանք վերաբերվում իրենք իրենց և աշխարհում իրենց տեղին: Սոցիալականացման այս գործընթացով մարդկանց հարաբերությունն աշխարհի հետ փոխվում է»[1]: Այնուհանդերձ, կենսաքաղաքականության ու քաղաքական վարքաբանության մեկ այլ ծայրահեղության մեջ չընկնելու նպատակով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ոչ միայն գենետիկ գործոնները, այլև մշակութային միջավայրն են ձևավորում անձին որպես սոցիալական, քաղաքական էակ վարքի կրկնօրինակման կառուցակարգերով: Դիցուք՝ «ծնողների վարքը կարող է ակնհայտ բարերար ազդեցություն գործել զավակի աճի ու հաջող վերարտադրության շանսերի վրա ու սա հատկապես կարևոր կարող է լինել սոցիալական տեսակների համար, որտեղ սոցիալական հմտությունները պետք է փոխանցվեն ծնողից զավակին կրկնօրինակման միջոցով (մշակութային ժառանգականություն)»[2]: Այս հանգամանքը նկատի ունենալով էլ ներմուծել ենք «բիոկրթական» եզրը, որը հնարավորություն է տալիս՝

- բացահայտել բազմաչափ կենսաքաղաքական ու սոցիամշակութային երևույթների փոխկախվածությունը.
- գտնել փոխազդեցությունների բարերար ազդեցությունը մեծացնելու իրական միջոցներ.
- սահմանել սովորութային ու կենսահասարակական երևույթների իրական կամ երևակայական սահմանները.
- շարժունակությունն ու կրթական շարժունակությունը, ինտեգրումը դիտարկել որպես նոր կենսահասարակական ու կենսաքաղաքական գիտաճյուղ.
- ինտեգրել հասարակագիտական բազմաոլորտ ուսումնասիրություններ արդյունքները.
- գտնել հի կենսունակության ապագայաբանական հենքերը.
- քննարկել կենսունակությունը ռազմավարական այլ խնդիրների, տվյալ դեպքում՝կենսաքաղաքականության և բիոկրթական հիմնախնդիրների համապատկերում.
- մշակել ռազմավարական ապագայի կանխատեսման, ծրագրավորման, կառավարման մեխանիզմներ ըստ այդմ և այլն:

---

[1] ***Furedi F.***, *How Fear Works: Culture of Fear in the 21st Century, Bloomsbury Continuum, p.175*

[2] ***Dunbar R.***, *Evolution: What Everyone Needs to Know, Oxford University Press, 2020, p.66*

Գրականություն

1. **Մարգարյան Մ.,** Քաղաքական տուրբուլենտություն. մարտահրավերներ և Հայաստանի բնականոն արդիականացման հնարավորությունները, 26.01.2021 https://mmmargaryan.wordpress.com
2. **Blank R. H. and Hines S. M., Jr,** Biology and Political Science, Routledge, 2001
3. **Dunbar R.,** Evolution: What Everyone Needs to Know, Oxford University Press, 2020
4. **Foucault M**., The Birth of Biopolitics, Lectures at the College de France, 1978-79, edt. Senellart M., Palgrave Macmillan, 2008
5. **Furedi F.,** How Fear Works: Culture of Fear in the 21st Century, Bloomsbury Continuum
6. **Poghosyan G**. At the intersection of the European Higher Education Area and BRICS: The Way Forward, «Լրաբեր», Հայ-ռուսական համալսարանի սերիա՝հումանիտար և հասարակական գիտություններ, (35), ՀՌՀ Հրատարակչություն, № 2/2020, էջ148-160
7. **Poghosyan G**., The Self-perceived Impact of COVID-19 Human Mobility Restrictions on Armenian Students Aged 14-18, Journal of Education in Black Sea Region Vol. 6, Issue 2, 2021, pp. 85-94 DOI: https://doi.org/10.31578/jebs.v6i2.234

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, պ.գ.դ. Վ.Մ.Ավանեսյանը: